ՀՀ ՏԿՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ

Ներդրումային ծրագրերի համակարգման տնօրինություն
Հայաստանի Հանրապետություն

Հետաքրքրության արտահայտման հրավեր
խորհրդատվական ծառայություններ մատուցելու համար

Ամսաթիվ	17 հունվարի , 2014թ.
Վարկի համար	L2860-ARM (SF)՝ Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր – Լրացուցիչ ֆինանսավորում
Պայմանագրի անվանում և համար	«Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր – Լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի 6 տարվա աուդիտորական ծառայություններ, L2860-LCS-3B
Հետաքրքրության հայտերի ներկայացման վերջնաժամկետ	15 փետրվարի, 2014թ

1. Սույն հետաքրքրության արտահայտման հրավերը (ՀԱՀ) հետևում է 2012թ. փետրվարի 3-ին «ԱՋԲ-ի բիզնեսի հնարավորություններ» կայքում սույն ծրագրի համար լույս տեսած Գնումների ընդհանուր հայտարարությանը:

2. Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Ասիական Զարգացման Բանկի կողմից «Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր – Լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է վարկի միջոցների մի մասն օգտագործել «Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր – Լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի 6 տարվա աուդիտորական ծառայություններ, L2860-LCS-3B պայմանագրի շրջանակներում նախատեսվող վճարումները կատարելու համար:

3. «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն («ՀՋԿ» ՓԲԸ) Ծրագիրն իրականացնող կազմակերպությունն է և հանդես է գալիս որպես Ծրագրի պատվիրատու:

4. Ստորև ներկայացվում է Խորհրդատվական ծառայությունների շրջանակը, որի համար կազմվել է սույն ՀԱՀ-ն՝

   «Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր – Լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում պահանջվում է աուդիտոր՝ 6 տարվա ընթացքում «Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր – Լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում աուդիտորական ծառայություններ իրականացնելու, ծրագրի տարեկան ֆինանսական հաշվետվությունները ստուգելու համար ԱՋԲ վարկ՝ L2860-ARM (SF): Աուդիտորական ծառայությունները պետք է ներառեն 2013, 2014, 2015, 2016 թթ դեկտեմբերի 31-ով ավարտվող ֆինանսական տարիների ժամանակահատվածը, ինչպես նաև 2012թ-ի դեկտեմբերի 31-ով ավարտվող չորս ամիս ժամանակահատվածը և 2017թ-ի ապրիլի 30-ով ավարտվող չորս ամիս ժամանակահատվածը:

5. Գնումների հետ կապված տեղեկատվություն.

6. Խորհրդատուները պետք է ընտրվեն ԱՋԲ-ի խորհրդատուների ընտրության ուղղեցույցների Նվազագույն գնի վրա հիմնված ընտրության ընթացակարգի համաձայն (2010թ. ապրիլ, ժամանակ առ ժամանակ լրամշակվում է):

7. Առաջադրանքի իրականացման ժամկետը 6 տարվա ընթացքում սահմանվում է վեց (6) ամիս՝ սկսած պայմանագրի ստորագրման օրվանից:

8. Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ՝ ՀՁ-ի կամ ենթախորհրդատուի ձևաչափով՝ իրենց որակավորումը բարձրացնելու նպատակով: Եթե Խորհրդատուները մտադիր են միավորվել այլ կազմակերպությունների հետ, ապա Հետաքրքրության արտահայտման հայտում պետք է ներկայացնեն միավորման կառուցվածքն ու տեսակը:

9. Հետաքրքրության հայտերի ներկայացում՝
«ՀՁԿ» ՓԲԸ-ն հրավիրում է որակավորված ընկերություններին ներկայացնել վերոհիշյալ ծառայությունները մատուցելու համար իրենց հետաքրքրության հայտը, ինչը պետք է ուղեկցվի համապատասխան փորձն ու կարողություններն ապացուցող փաստաթղթերով: ՀԱՀ պետք է ուղեկցվի հետաքրքրության արտահայտման նամակով և այն բոլոր փաստաթղթերով, որոնք նշված են Խորհրդատուների կառավարման համակարգում:

Խորհրդատուները պետք է ներկայացնեն միայն այնպիսի նյութերը, որոնք վերաբերվում են առաջարկվող ծառայություններին (25 էջից ոչ ավել) և խուսափեն ընդհանուր գովազդային նյութերից: ՀԱՀ-ի ձևաչափը կարելի է ձեռք բերել ներքոնշյալ հասցեում կամ ԱԶԲ-ի կայքում՝ http://csrn.adb.org: Հանձնարարության Տեխնիկական Առաջադրանքը (ՏԱ) զետեղված է ԱԶԲ-ի «Գործարար հնարավորությունների» վերոնշյալ կայքում, ինչպես նաև կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեում:

10. Ընտրության չափանիշներն են՝ (i) կազմակերպության ընդհանուր փորձը, (ii) ընկերության փորձն առաջադրանքի ոլորտում (ընկերության կողմից ստուգված ծրագրերի/դրամաշնորհների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների քանակը), (iii) հիմնական աշխատակազմի ընդհանուր որակավորումն ու քանակը (CV չի պահանջվում), (IV) ընկերության փորձը նման պայմաններում:

11. Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն անգլերեն լեզվով՝ ոչ ուշ քան 2014թ-ի փետրվարի 15-ը: Դիտարկվելու են միայն սահմանված ժամկետում Խորհրդատուների կառավարման համակարգում գրանցված և թղթային տարբերակով «ՀՁԿ» ՓԲԸ-ին ներկայացված ՀԱՀ-ները:

12. Ի լրումն վերոհիշյալի, ՀԱՀ-ի էլեկտրոնային տարբերակները Adobe PDF ձևաչափով կարող են ուղղարկվել «ՀՁԿ» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստին (ngevorgyan@armwater.am; echilakopyan@armwater.am; kghambaryan@armwater.am) որպես նախնական տեղեկատվություն, թեև էլեկտրոնային տարբերակները չեն դիտարկվելու որպես պաշտոնական ներկայացում:

13. Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեում, աշխատանքային օրերին, ժամը 9:00-ից մինչև 17:00 (երկուշաբթիից մինչև ուրբաթ):

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ
Ներդրումային ծրագրերի համակարգման տնօրինություն
Պրն՝ Նորիկ Գևորգյան, ՆՇՀՏ տնօրեն
Պրն՝ Էդուարդ Չիլ-Հակոբյան, ՆՇՀՏ ծրագրի կառավարիչ
Ք. Ղամբարյան, Գնումների մասնագետ
Վարդանանց փակուղի 8ա, 3-րդ հարկ
0010, Երևան, ՀՀ
Հեռ./ Ֆաքս (+374 10) 54 28 77
էլ-փոստ: ngevorgyan@armwater.am; echilakopyan@armwater.am; kghambaryan@armwater.am